

ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ARMENIAN CINEMATOGRAPHERS OF THE WORLD



ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ARMENIAN CINEMATOGRAPHERS OF THE WORLD

Նվիրվում է Վիլյամ Սարոյանի 110–ամյակին:
Dedicated to the 110th anniversary of William Saroyan.

Երևան • 2018 • Yerevan



ՀԴՏ 791
ԳՂՄ 85.37

Ա 653
Աշխարհի հայ
կինոգործիչները –
Եր.: Համահայկական
աշխարհագրական
ասոցիացիա, 2018.– 128 էջ:

Armenian Cinematographers
of the World
Yer.: Panarmenian Geographic
Association, 2018.– 128 pp.

ՀԴՏ 791
ԳՂՄ 85.37

Աշխարհի հայ կինոգործիչները գիրքը
ներկայացնում է տարբեր երկրներում
գործունեություն ծավալած ու ճանաչում գտած
հայ կինոգործիչներին:

Armenian Cinematographers of the World
The book represents famous Armenian
cinematographers from all over the world.

Նախատեսված չէ վաճառքի համար:
Not for sale.

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
All rights reserved.

Գրքի վրա աշխատել են՝	Project team
Տաթևիկ Սայադյանը	Tatevik Sayadyan
Սարգիս Կարապետյանը Աննա Բեգլարյանը Էսթեր Խանիկյանը Լիլիթ Երիցյանը	Sargis Karapetyan Anna Beglaryan Ester Khanikyan Lilit Yeritsyan
Թագուհի Կարապետյանը Ներսես Մարտիրոսյանը Մովսես Դեմիրճյանը Արմեն Մելքումյանը Սուսաննա Գևորգյանը Արմեն Անանյանը Դավիթ Բոյաջյանը	Taguhi Karapetyan Nerses Martirisyanyan Movses Demirtshyan Armen Melkumyan Susanna Gevorgyan Armen Ananyan Davit Boyajyan
Նախագծի ղեկավար՝ Ռաֆայել Հովհաննիսյան	Head of project Rafael Hovhannisyan

ISBN 978-9939-1-0865-0

©«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ, 2018
©“MTS Armenia” CJSC, 2018

©«Համահայկական աշխարհագրական ասոցիացիա», 2018
©“Panarmenian Geographic Association”, 2018



ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ARMENIAN CINEMATOGRAPHERS OF THE WORLD

Բովանդակություն	Contents
Լերածական խոսք	4 Opening Address
Նախաբան	6 Preface
Վիլյամ Սարոյան	8 William Saroyan
Սերժ Ավետիքյան	30 Serge Avetikyan
Ատոմ Էգոյան	44 Atom Egoyan
Շառլ Ժերար	56 Charles Gérard
Եժի Կավալերովիչ	64 Jerzy Kawalerowicz
Ռուբեն Մամուլյան	74 Rouben Mamoulian
Արմեն Զիգարխանյան	88 Armen Dzhigarkhanyan
Շերիլին Սարգիսյան	100 Cherilyn Sarkisian
Անրի Վեռնույ	114 Henri Verneuil

Երևան • 2018 • Yerevan

ԱՇԽԱՐՀԻ ՉԱՅ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ARMENIAN CINEMATOGRAPHERS OF THE WORLD

Հարգելի՛ ընթերցող,

Ուրախ եմ կրկին ողջունել Ձեզ ՎիվաՍել–ՄՏՄ–ի և «Համահայկական աշխարհագրական ասոցիացիայի» համագործակցությամբ ստեղծված՝ հայ մշակույթի ակնառու գործիչներին նվիրված հերթական հատորի էջերից:

Այս անգամ գիրքը նվիրում ենք կինեմատոգրաֆի ասպարեզում անգնահատելի ներդրում ունեցած հայ արվեստագետներին, որոնք իրենց Նշանակալի կյանքով ու գործունեությամբ բարձր են պահում մեր ժողովրդի անունն ու պատիվը:

Գրքում ներկայացված գործիչներից ոմանց անունները միգուցե հայտնի լինեն քչերին, և մենք ուրախ ենք, որ այս գրքի շրջանակում հնարավորություն ունենք պատմելու Նրանց մասին լայն հասարակությանը: Պետք է Նշել, որ հուշարձանների, երաժիշտների, նկարիչների, իսկ այժմ՝ նաև՝ կինոգործիչների մասին պատմող այս հրատարակություններում առաջին անգամ են այս կերպով ամբողջացվում աշխարհի հայ Նշանավորների մասին տեղեկությունները:

2018–ին Նշվեց 20–րդ դարի ամերիկյան գրականության ականավոր դեմքերից մեկի՝ Վիլյամ Սարոյանի 110–ամյակը, որի ստեղծագործությունների էկրանավորումներն առանձնակի տեղ են զբաղեցրել համաշխարհային կինոյի պատմության մեջ՝ հատկապես իրենց գրական արժանիքների համար:

Սարոյանի հայտնի խոսքերը հայի կամքի, վճռականության ու աշխարհի ցանկացած անկյունում սեփական ինքնությունը փայփայելու ու պահպանելու մասին թերևս բացահայտում են գրողի զգացմունքներն ու վերաբերմունքը սեփական արմատների հանդեպ. ապրելով Հայաստանից դուրս, լինելով ամերիկացի իր ստեղծագործությամբ, Նա, այնուամենայնիվ, ոգով մնացել է մեր հայրենիքի իրական զավակը:

Աշխարհի հայ կինոգործիչներին նվիրված ևս մեկ հատոր ենք ունենալու, որը նախատեսում ենք լույս ընծայել հաջորդ տարի: Այն կնվիրվի մեծանուն շանսոնյե Շառլ Ազնավուրին: Հատորում Նաև կպատմենք այն Նշանավոր կինոգործիչների մասին, ում մասին հոդվածները տեղ չեն գտել այստեղ:

Համոզված եմ՝ այս գիրքը ևս մեկ հաճելի ու հետաքրքիր առիթ կդառնա հայկական հոգևոր և մշակութային ժառանգությունը ճանաչելու և ազգային ներուժը վերագնահատելու համար:

Ռալֆ Յիրիկյան

ՎիվաՍել–ՄՏՄ–ի գլխավոր տնօրեն



Dear reader,

We are glad to present just another volume of the series dedicated to eminent figures of the Armenian culture – a project that has been made possible owing to the fruitful partnership between VivaCell–MTS and “Panarmenian Geographic Association”.

This volume features art workers of Armenian descent that have made outstanding contributions to world cinema arts and whose life and work wins acclaim for Armenia.

Some of the names featured in “Armenian cinematographers of the world” may be familiar to relatively small number of readers, and we are glad that, through this book, the wider public will have an opportunity to learn about them. I would also like to emphasize that the publications dedicated to Armenian monuments, musicians, artists, and this time – to cinematographers, are the first attempt to encompass complete information on renowned Armenians of the world in this format.

2018 marked the 110th anniversary of William Saroyan, one of the most prominent figures of the 20th century American literature. The screen adaptations of Saroyan’s works have a unique place in world cinema, in particular, for their literary merits.

The words about Armenians’ strength, willpower, and commitment to cherish and maintain own identity Saroyan once said are probably the proof that, despite living outside Armenia, and being American in his works, spiritually he, nevertheless, remained a true son of his people.

We are planning to have another volume dedicated to Armenian cinematographers next year. The second volume will be devoted to the great chansonnier Charles Aznavour. It will also continue the list of prominent Armenian cinematographers that have not been included in this book.

I am convinced that this book will become yet another interesting occasion to discover the spiritual and cultural heritage of Armenians, and to once again appreciate our national potential.

Ralph Yirikian

VivaCell–MTS General Manager

Նախաբան

Սիրով Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Աշխարհի հայ կինոգործիչները» գիրքը: Այն ՎիվաՍել–ՄՏՍ ընկերության հետ համատեղ և ֆինանսավորմամբ ստեղծված հրատարակությունների արդեն իններորդ հատորն է: Աշխարհի հայկական հուշարձանները ներկայացնելուց հետո մեր ընթերցողի դատին հանձնեցինք արտերկրում մեծ ճանաչում ունեցող հայ երաժիշտների ու նկարիչների մասին գրքերը: Այժմ հերթն արդեն կինոգործիչներինն է: Այս հատորում ներառել ենք պատմություններ Հայաստանից դուրս ապրած և ապրող անվանի հայ կինոգործիչների մասին, որոնք իրենց նվիրվածությամբ ու աշխատանքով հռչակ են բերել նաև մեր երկրին: Իհարկե անվանի հայ կինոգործիչների և առհասարակ կինոարտադրությունում ներգրավված մեր հայրենակիցների թիվը բավականին մեծ է, և անհնար է մեկ գրքում ամբողջական կերպով անդրադառնալ նրանց բոլորին: Այստեղ մենք ընդգրկել ենք միայն ինն անուն, մյուսներին կանդադառնանք «Աշխարհի հայ կինոգործիչները» գրքի երկրորդ հատորում, որը նվիրված է լինելու Շառլ Ազնավուրի հիշատակին: Իսկ այս գիրքը նվիրվում է Վիլյամ Սարոյանի ծննդյան 110–ամյակին: Գուցե որոշ ընթերցողների մոտ հարց առաջանա, թե ինչու ենք Սարոյանին ընդգրկել այս գրքում, ասենք, որ նրա վեպի հիման վրա նկարահանված «Մարդկային կատակերգություն»

կինոնկարը 1944 թ. արժանացել է Կինոարվեստի ամերիկյան ակադեմիայի ամենամյա ազգային Օսկար մրցանակի՝ «լավագույն գրական սկզբ–նաղբյուր» անվանակարգում:

Այստեղ մենք չենք ընդգրկել հայկական կինոյի այնպիսի հսկաների, ինչպիսիք են Համո Բեկնազարյանը, Արտավազդ Փելեշյանը, Ֆրունզե Դովլաթյանը, Ալբերտ Յավուրյանը, Մհեր Մկրտչյանը և ուրիշներ, քանի որ այս հրատարակությունում անդրադարձել ենք միայն արտերկրի մեր անվանի հայրենակիցներին, թեև վերը նշված անուններից յուրաքանչյուրն արժանի է մի առանձին գրքի: Այս ժողովածուում ներկայացված կինոգործիչներին ընտրել ենք՝ հիմնվելով միջազգային հեղինակավոր կինոփառատոներում ստացած մրցանակների վրա:

ՎիվաՍել–ՄՏՍ ընկերության և անձամբ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի նախաձեռնությամբ մեր երկրում տարիներ շարունակ կյանքի են կոչվում ոչ միայն սոցիալական, այլև մեծ թվով մշակութային ծրագրեր, որոնք իրենց հաստատուն տեղն են գրավել Հայաստանի մշակութային կյանքում:

Հուսով ենք՝ ՎիվաՍել–ՄՏՍ ընկերության հետ մեր այս համագործակցությունը շարունակական կլինի: Համոզված ենք, որ ընկերությունը կշարունակի իր հայրենանվեր գործը՝ ի շահ մեր երկրի:

Preface

We are delighted to present the ninth book entitled “The Armenian Cinematographers of the World” which has been brought to life in collaboration and sponsorship of VivaCell–MTS. “The Armenian monuments of the World” was the first book in this series followed by the renowned Armenian musicians and painters. Here comes the turn to present the Armenian cinematographers of the world.

In this volume, we have included the well–known Armenian filmmakers, both living and deceased, whose dedication and industry has brought fame and recognition to our country as well. Undoubtedly, the list of famous Armenian filmmakers and representatives of Cinema Arts could hardly be encompassed in one book.

While the first volume embraces only nine names, and commemorates the 110th anniversary of William Saroyan, many more will be presented to your attention in the second volume of this series, which will be dedicated to the memory of Charles Aznavour. Many readers may wonder why William Saroyan was included in this book: it should be noted that Saroy–

an wrote the novel “The Human Comedy” and the film based on this story was released in 1944 having earned an Oscar for the Original Motion Picture Story at the Annual Academy of Film Arts.

Prominant figures, such as Hamo Beknazaryan, Artavazd Peleshyan, Frunze Dovlatyan, Albert Yavuryan, Mher Mkrtchyan and many others, whose lives and activities deserve a separate book, are not included here, as we only addressed who lived and worked abroad. We selected the filmmakers who had won international awards at the prestigious international film festivals.

On behalf of VivaCell–MTS and its General Manager Ralph Yirikian, personally, more than a dozen of social programs have been initiated and brought to life. As for numerous cultural projects, they have firmly occupied their place in cultural life of Armenia.

We look forward to continuing this collaboration with VivaCell–MTS. We are convinced that VivaCell–MTS will stay committed to the national cause for the sake of our country.

METRO-GOLDWYN-MAYER'S GREAT PRODUCTION
William Saroyan's

THE HUMAN COMEDY

ՎԻԼՅԱՄ
ՍԱՐՈՅԱՆ

WILLIAM SAROYAN



Starring
MICKEY ROONEY
FRANK MORGAN


JAMES CRAIG MARSHA HUNT FAY BANTER RAY COLLINS
VAN JOHNSON DONNA REED JACK JENKINS DOROTHY MORRIS
JAN CRAVEN ANN AYARS MARY NASH HENRY O'NEILL
CLARENCE BROWN



→ 36 տարեկանում
«Մարդկային
կատակերգություն»
ֆիլմի սցենարի համար
Նա արժանացավ
ամերիկյան
կինոակադեմիայի
«Օսկար» մրցանակին:

Վիլյամ Սարոյանը ծնվել է 1908 թ. օգոստոսի 31-ին Ֆրեզնոյում, Բիթլիսից գաղթած Արմենակ և Թագուհի Սարոյանների ընտանիքում: Երեք տարի անց մահացել է հայրը՝ 36-ամյա Արմենակ Սարոյանը, թողնելով որդուն միայն աղոտ հիշողություն իր մասին: Հայրը, որը Նույնպես գրող էր, դառնում է ոգեշնչման մեծ աղբյուր Նրա համար: Ի տարբերություն երբևէ չիրատարակված Արմենակ Սարոյանի, որդին կարողանում է հետագայում հաջողության հասնել: Հոր մահից հետո Վիլյամը, Նրա եղբայր Չենրին, քույրերը՝ Չաբելն ու Կոզետը մի քանի տարի ապրել են Օբլենդի Ֆրեդ Ֆինչ մանկատանը, իսկ մայրը սպասուհի է աշխատել Սան Ֆրանցիսկոյում: Երբ երեքամյա Վիլյամին մայրը պետք է թողներ որբանոցում, Նրան Ջոն Ջիգեր անունով մի տիկնիկ է նվիրել, որը Նրա հիշողության մեջ միշտ պահպանվել է: Սարոյանը հետագայում նշել է, որ այդ տիկնիկով կարծես մայրը ցանկանում էր փարատել իր բացակայությունը: Տիկնիկի կերպարը Նա արտացոլել է Նաև իր ստեղծագործություններում: Ընտանիքն ի վերջո Նորից միավորվել է ու հաստատվել Ֆրեզնոյում՝ Սան Հուակինի հովտում, Նրանց է միացել Նաև Թագուհի Սարոյանի մայրը՝ Լուսնթագ Ղարոլլանյանը, որը մեծ ազդեցություն է թողել փոքրիկ Վիլյամի վրա: Ֆրեզնոյում էլ մեծացել է հայ գաղթականի տղան, և հենց այդ տարիների իրադարձությունները հետագայում հիմք են դարձել Նրա պատմվածքների համար:

Պատահական չէ, որ երիտասարդ Վիլյամ Սարոյանին էր վիճակված, չունենալով ամերիկյան որակավորված կրթություն, հասնել ակադեմիական կարիերայի: Սարոյանը կանոնավոր կրթություն չի ստացել: Նա թողել է դպրոցը, քանի որ դպրոցական ծրագիրը անհետաքրքիր էր և ճանճրալի, բացի այդ դպրոցում հաճախ շեշտում էին Նրա գաղթականի որդի լինելը: Տղային ստիպում էին քոլեջ հաճախել, բայց դա չէր մտնում Նրա ծրագրերի մեջ: Երրորդ դասարանում առաջին անգամ արդեն վաստակել էր դպրոցի ամենաչար տղայի համբավը: «Ինձ հաճախ անկյուն էին կանգնեցնում, հայիչում, քաշում մազերս ու ականջներս



William Saroyan was born on August 31, 1908, in Fresno, to Armenak and Takoohi Saroyan, Armenian immigrants from Bitlis, Turkey. Armenak died at the early age of thirty-six when Saroyan was only three. He was to remain in William's mind not only as a very dim memory, but also as an enduring source of motivation and encouragement, for Armenak had been a writer albeit never published. The son meant to succeed where the father, in unknown circumstances, had failed. Following their father's death, William, his brother Henry and his sisters Zabel and Cozette spent several years at the Fred Finch Orphanage in Oakland, while young widow Takoohi took up menial work in nearby San Francisco. When the mother had to leave her three-year-old William in an orphanage, she gave him a doll named Coon Jiger. Saroyan later said that the puppet seemed to reimburse the mother's absence. The character of this doll was also reflected in his works. The family was eventually reunited back in Fresno, in the San Joaquin Valley, and William Saroyan's formidable maternal grandmother Lucy (Lusntag Gharoghlyan), who was to be a strong influence on him, joined the household. The childhood of the son of the Armenian immigrant later became the basis for his stories.




և, ի վերջո, վրնդեցին դպրոցից»,- հետագայում հիշել է նա: Սարոյան-գրողի ծնավորման մեջ մեծ դեր է խաղացել ինքնակրթությունը, ամերիկյան և համաշխարհային գրականության ընթերցումը, հարազատ ժողովրդի հոգևոր մշակույթի, ավանդույթների, պատմության ժառանգումը, հայկական շրջապատի ազգային ինքնատիպությունը: 12 տարեկան հասակում Սարոյանը կարդում է Գի դը Մոպասանի «Չանգը» պատմվածքը, որից հետո վստահաբար որոշում է գրող դառնալ: «Այո, ես շատ ուսուցիչներ եմ ունեցել՝ Սարկ Տվեն, Գի դը Մոպասան, Չեխով, Դիքենս, Բեռնարդ Շոու»,- մի անգամ ասել է նա: Այդ ժամանակվանից ի վեր նա դարձել է Ֆրեզնոյի հանրային գրադարանի մշտական այցելու և Տեխնիկական դպրոցում սկսել է տպագրական մեքենայի վրա աշխատելու հմտություններ ձեռք բերել:

Դեռ դպրոցում սովորելու տարիներին նա ազատ ժամանակ լրագրեր է վաճառել, որպեսզի կարողանա գումար վաստակել ընտանիքի համար, որն այնքան կարիքներ ուներ: Իրենց ապրելակերպի մասին Սարոյանը նկարագրել է «Իմ անունն Արամ է» պատմվածքում այսպես. «...ամենազարմանալի ու ծիծաղելի աղքատությունն աշխարհում»: Չետագայում Սարոյանը աշխատել է որպես հեռագրատան ցրիչ և շուտով ծեռք է բերել Ֆրեզնոյի ամենաարագաշարժ ցրիչի համբավ: 18 տարեկանում Սարոյանը գիտակցելով, որ Ֆրեզնոն չափազանց փոքր է իր համար. որոշում է մեկնել Լոս

It is not surprising that Saroyan had never had any academic achievement without solid American schooling.

He left school early — the school years were too slow and predictable and there was constant friction, caused by boredom and by frequent reminders that he was the son of an immigrant. He was urged to go to college, but college was not in his plans. “In the third grade for the first time, I earned the reputation of the wickedest boy at school; I was often punished, bullied, and eventually dropped out of school.” From the age of seven Saroyan started selling newspapers in the streets of Fresno; self-education, reading of American and world literature, inheritance of the spiritual culture, traditions, history of the native people, the national identity of the Armenian community played a great role in the formation of Saroyan-writer. When he was twelve years old, he read, by chance, Guy de Maupassant’s story ‘The Bell,’ and the secret ambition to be a writer started to form. “Yes, I had many teachers – Mark Twain, Guy de Maupassant, Chekhov, Dickens, Bernard Shaw”, once he said. William became, then, a frequent visitor to Fresno’s public library and he learned to touch-type at the Technical School.

While still at school he sold newspapers in his spare time to earn money badly needed by his family, who were living in what he describes, in “My Name Is Aram” (1940) as ‘the most amazing and comical poverty in the world.’ Later he became a messenger with a postal-telegraph company, acquiring a reputation for high-speed deliveries.



Անջելես: Այստեղ նա աշխատանքի է անցնում Ազգային անվտանգությունում, սակայն այս աշխատանքը տևում է ընդամենը 2 շաբաթ:

Ի վերջո «Դի Օվերլենդ Մանթլի» ամսագիրը համաձայնվում է հրատարակել մի պատմվածք, սակայն առանց վճարի, այդտեղ այն ժամանակ տպագրվում էին այնպիսի գրողներ, ինչպիսիք էին Ջեյ Լոնդոնն ու Ամբրոջ Բիրսը: Մոտ 1 տարի Լոս Անջելեսում ապրելուց հետո Սարոյանը վճռում է տեղափոխվել Նյու Յորք: Այստեղ գործերն անհաջող են սկսվում, քանի որ Նրա ճամպրուկները՝ բոլոր իրերով ու գումարով, սխալմամբ ուղարկած են լինում Նյու Օռլեան: Չետագա 6 ամիսներին ևս հաջողությունը Սարոյանին չի ժպտում: Չդիմանալով կարոտախտին՝ նա վերադառնում է Կալիֆոռնիա ավելի հասուն, սթափ և գոհ, որ ազատվել է անհիմն սպասումներից: Ժամանակի ընթացքում պարզորոշ է դառնում, որ ինքնակրթման գործընթացը բավականին երկար է տևելու: Շուտով տեղափոխվում է Սան Ֆրանցիսկո, որտեղ մի շարք ժամանակավոր աշխատանքներ է կատարում, այդ թվում՝ աշխատելով թաղման ծառայությունում: Փորձում է աշխատանք



By the time William was eighteen Fresno was too small for him and the urge to leave town and seek his fortune grew stronger. His first attempt to leave took him only — and by mistake — as far as Los Angeles, where in a moment of desperation he joined the National Guard, though this unsuitable employment lasted only for two weeks.

He had a story accepted by The Overland Monthly, a western magazine, which in its day had published the work of such famous writers as Jack London and Ambrose Bierce, but it could not pay anything. Then, a year or so after he had left Fresno, Saroyan moved to New York. Things started badly when he discovered on arrival that his suitcase containing nearly all his money had been sent to New Orleans by mistake. His luck did not improve much and in less than six months, the adventure was over. The hoped-for major literary breakthrough had not come and William was homesick. He returned to California wiser, more sober, embarrassed, yet glad to be rid of the absurd expectation that he would suddenly write something so irresistible that it would bring him instant fame.


It was becoming clear that his literary apprenticeship was going to be a lengthy affair. He moved to San Francisco, working at a variety of uninspiring jobs (one was

գտնել գրականությունում կամ թերթի խմբագրություններում, բայց դա էլ չի հաջողվում: Մեծ ընկճախտի տարիներին Սարոյանի մոտ գրելու ցանկությունն ավելի է ահագնանում: Նա քիչ էր վատակում: Շաբաթօրյա տոնավաճառներում բանջարեղենի վաճառակետում նրա աշխատավարձին գումարվում էին մոլախաղերից ստացված պատահական շահումները: Թեև բավականին աղոտ էր կարճ պատմվածքները սեփական յուրօրինակ ոճ դարձրած գրողի ապագան, սակայն այդ ժամանակ էլ նա չդավաճանեց իրեն հոգեհարազատ գրական այդ ուղղությամբ: Փոխարենը նա ջանասիրաբար շարունակում էր աշխատել որդեգրելով մի բավականին փշոտ ուղի, և դա էր ինքնատիպ գրողի միակ ընտրությունը: Վիլյամին հուսահատեցնում էին տարբեր խմբագրություններ ուղարկած պատմվածքների տպագրության մասին պատասխան չստանալը, և նա արդեն դադարել էր պատմվածքներն ուղարկել, իր բնորոշմամբ, «անիմաստ ամսագրերի խեղճ խմբագիրներին»: Իր առաջին պատմվածքը Սարոյանը տպագրում է 1933 թ. Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում՝ Սիրակ Գոյրյան ստորագրությամբ:

1933 թ. դեկտեմբերի 14-ի առավոտյան Սարոյանը ստանում է իր համար բաղձալի և վաղուց սպասված մի նամակ, որտեղ Վիլիս Բըռնեթը և Մարթա Ֆոլին գրում էին, որ պատրաստ են վճարել «ճոճաճողով սավառնող խիզախ երիտասարդը» պիեսի համար: Պիեսը շատ հետաքրքիր է և առնչվում է գիտակցության հոսք կոչվող գրականությանը:

with a funeral establishment). On a number of occasions, he sought more decent jobs for newspapers and bookstores, albeit again unsuccessful. With the coming of the Great Depression he was more committed to writing than ever, and gave up all pretense of following seriously any other career. Occasional winnings from gambling supplemented the scant living he earned, at this time, by working on Saturday market stalls selling vegetables. Although the prospect for an unknown young writer specializing in his own unorthodox brand of short stories was bleak indeed, during this difficult period he refused to compromise his literary integrity. He continued instead to work in defiance of what was commercially acceptable — a hard and lonely path but the only choice for a writer of true originality.

A Boston-based Armenian journal, Hairenik, began to publish his works in 1933 under the pen name Sirak Goryan, but he was growing tired of rejection elsewhere and was almost ready to stop sending stories to 'idiot editors of insignificant magazines.' One December morning in 1933 Saroyan received a long-awaited letter, in which the editors of Story magazine Whit Burnett and his wife Martha were willing to pay for the "The Daring Young Man on the Flying Trapeze." The young writer, then in his middle twenties and feeling that time was running out for him, decided on an act of boldness to convert this piece of good fortune into a decisive breakthrough.



→ Շատերը չէին համակերպվում լիարժեք կրթություն չստացած երիտասարդ գրողի նվաճումների հետ:


Քսանամյա երիտասարդ գրողը վերջապես որոշում է համարձակ քայլ անել և բեկել ճակատագրի ուղին: Նա սկսում էր աշխատել՝ առանց հստակ իմանալու, թե ինչի մասին պետք է լինի պատմվածքը: Նա աստիճանաբար ավելի ու ավելի հաճախ էր ստանում այնքան սպասված, բայց միևնույն ժամանակ անսպասելի նամակներ տարբեր խմբագրություններից, որոնք հաղորդում էին, որ նրա պատմությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում, և հորդորում էին նրան շարունակել: Սա մի յուրօրինակ վճռական պահ էր, որը, կարծես, խորհրդանշում էր նրա աշակերտության փուլի ավարտը:



He began with no firm ideas as to what the stories would be about. Midway through the month telegrams, both expected and unexpected, arrived from the editors with the message he needed: yes, the stories were being received with great interest — keep them coming! This was the decisive moment of acceptance, marking the end of his long apprenticeship.

More of these pieces were printed in Story in later months, and as word spread of this new and exciting literary find, stories were soon appearing in such magazines as The American Mercury, Harper's, The Yale Review, and some others. By October 1934, Random House was ready to publish "The Daring Young Man on the Flying Trapeze, and Other Stories." Surprisingly the book was a best-seller. William Saroyan — or Saroyan, as he now became — had arrived on the literary scene with a bang.


Naturally, there were those who resented this sudden leap to fame and fortune.



Շատ տարիներ անց նա պետք է գրեր, որ գրողի միակ իրական հաջողությունը վրա է հասնում, երբ նա առաջին անգամ ընդունվում է որպես ստեղծագործող: Մնացածն արդեն այնքան էլ թակաս չէ:

Նորահայտ ստեղծագործողի հաջողության մասին լուրերն այնքան արագ տարածվեցին, որ երիտասարդ գրողն սկսեց արդեն պատմվածքները տպագրել այնպիսի հայտնի ամսագրերում, ինչպիսիք են «Ամերիքն Մերկուրի», «Հարփրզ», «Յել Բիկյու» և մի շարք այլ պարբերականներ:

1934 թ. հոկտեմբերին «Ռենդոմ Հաուս» իրատարակչությունը համաձայնվում է տպագրել «Ճոճաճողով սավառնող խիզախ երիտասարդը և այլ պատմվածքներ» գիրքը: Անսպասելիորեն, գիրքը դարձավ բեսթսելլեր և հռչակ բերեց երիտասարդ գրողին: Վիլյամ Սարոյանը մեծ աղմուկով մուտք գործեց գրական ասպարեզ: Սակայն քննադատության պակաս ևս չկար: Շատերը չէին համակերպվում լիարժեք կրթություն չստացած երիտասարդ գրողի նվաճումների հետ:



Since then he began to travel: he did not quite reach his father's city, Bitlis, however. His trips took him to London, Edinburgh, Paris, Vienna and Moscow, and extended only as far as Yerevan, in Soviet Armenia.

Saroyan opposes nationalistic ideas in his writings while exhibiting a strong emotional attachment to Armenia, and this inconsistency — or dilemma — is nowhere more apparent than in his short story "Antranik of Armenia."

In Moscow, he met the Armenian poet Yeghishe Charentz, and was promised an interview with the Great Russian writer Maxim Gorky, though this offer was later withdrawn because of Saroyan's political views. Passing through Finland before returning to America, he paid an unplanned visit to the composer Jean Sibelius.

More collections of short stories ("Inhale and Exhale" (1936); "Three Times Three" (1936); "Little Children" (1937); "Tracy's Tiger" (1951); "Peace, It's Wonderful" (1939) etc...) followed against the continuing background of the Depression. Written in a variety of styles and moods, with

Նա սկսում է ճամփորդել: Նրա ճանապարհորդությունները դեպի Լոնդոն, Էդինբուրգ, Փարիզ, Վիեննա ու Մոսկվա, նաև հորհրդային շայաստան՝ Երևան, մեծ ազդեցություն թողեցին երիտասարդ Վիլյամի վրա: Սակայն նրան չի հաջողվում լինել ծնողների հայրենի քաղաքում՝ Բիթլիսում:

Սարոյանն իր ստեղծագործություններում ընդդիմացել է ազգայնական գաղափարներին և ջերմ զգացմունքայնությամբ է արտահայտվել հորհրդային շայաստանի հանդեպ: Այդ հակասությունը լավագույն կերպով արտացոլվել է նրա «Անդրանիկ շայաստանի» կարճ պատմվածքում: Մոսկվայում Սարոյանը հանդիպում է Եղիշե Չարենցին, որը խոստանում է հարցազրույց կազմակերպել ռուս մեծ գրող Մաքսիմ Գորկու հետ, թեև այդ առաջարկը հետագայում մերժվում է՝



the Saroyan voice always clearly in evidence, these early stories established his reputation, as a writer with staying power, and provided the foundation for the rest of his career.

In fact, his most successful early collection was “My Name Is Aram” (1940), a poetic representation of the Armenians of his hometown in the days of his boyhood. Having known the conditions himself from an early age, he did not see the situation as greatly abnormal and this, in combination with youthful exuberance and the strong poetic streak always present in his work, helped lift his stories of the Depression well above the level of mere realism or mere criticism of wealth and privilege.

Saroyan’s career as a playwright began with “My Heart’s



Սարոյանի քաղաքական հայացքների պատճառով: Մինչև նահանգներ վերադառնալը, նա մեկնում է Ֆինլանդիա, այցելում կոմպոզիտոր Յան Սիբելիուսին:

Ընկճախտի շարունակական ֆոնին ծնվեցին Նոր կարճ պատմվածքներ՝ «Ելք ու մուտք» (1936 թ.), «Երեք անգամ երեք» (1936 թ.), «Փոքրիկ երեխաներ» (1937 թ.), «Թրեյսի վագրը» (1951 թ.), «Խաղաղություն», «Հրաշալի է» և այլն: Տարբեր տրամադրություններով և զանազան ոճերով գրված ստեղծագործություններում ակնհայտ էր սարոյանական դրոշմը, որը հիմք դարձավ նրա հետագա ստեղծագործական ուղին կերտելու համար:

Նրա վաղ շրջանի ամենահաջողված աշխատանքներից է «Իմ անունն է Արամ» (1940 թ.) պատմվածքների ժողովածուն, որտեղ բանաստեղծական լույսի ներքո նա ներկայացնում է իր մանկության տարիները՝ հայերով շրջապատված հայրենի քաղաքում: Դեռևս վաղ տարիքից ապրելով դժվարին պայմաններում, նա արտասովոր ոչինչ չէր ավելացնում իր պատմություններին, դրանք համեմված էին երիտասարդական ավյունով ու բանաստեղծական ճիրքով և օգնում էին նրան այդ տխուր պատմություններն ավելի բարձր մակարդակի հասցնել, քան սովորական ռեալիզմն է:

Սարոյանը, որպես դրամատուրգ, սկսել է ստեղծագործել 1939 թ.: Առաջին պիեսը «Իմ սիրտը լեռներում է» դրաման էր: Ներկայացումը մեծ հաջողություն ունեցավ, գլխավորը, այն դուր եկավ Զորջ Ժան Նաթանին, և թատերական այս հաջողությանը հաջորդեց «Կյանքիդ



in the Highlands” in 1939. The play was well received, most importantly by George Jean Nathan, and was swiftly followed by his greatest theatrical success, “The Time of Your Life” (1939). The latter earned the New York Drama Critics’ Circle Award and the Pulitzer Prize (it was the first play to win both), though Saroyan refused the Pulitzer Prize because of his strong feelings about commerce patronizing the arts.

“The Time of Your Life” was followed by a series of Broadway productions: “Love’s Old Sweet Song” (1940), “The Beautiful People” (1941), “Across the Board on Tomorrow Morning” and “Talking to You” (1942) etc.; in 1941 he established a Saroyan Theatre at the Belasco. In late 1941, he took time off from his theatre activities to write a film scenario in Hollywood, “The Human Comedy.” He sold the script to M.G.M. American Media Company for sixty thousand dollars, but then offered to buy it back for a larger sum when his demand to personally produce and direct the film was declined.


The Company declined the offer: the film, starring Mickey Rooney, was a hit, but was hardly to Saroyan’s liking. He turned the script into a novel, which became his most successful book.

At the age of 36, he won the American Film Academy’s Award (Oscars) for the Screenplay for the “Human Comedy.”



ժամանակը» պիեսը, որի համար այն արժանացավ Նյու Յորքի քննադատների և Պուլիցերյան մրցանակների. սա առաջին աշխատանքն էր, որ արժանացավ միաժամանակ երկուսին էլ: Բայց Սարոյանը վերջինից հրաժարվեց՝ պատճառաբանելով. «Առնուհետև իրավունք չունի հովանավորելու արվեստը»:



«Կյանքիդ ժամանակին» հաջորդեցին մի շարք բրոդվեյյան ներկայացումներ՝ «Սիրո հին քաղցր երգը» (1940 թ.), «Գեղեցիկ մարդիկ» (1941 թ.), «Վաղը՝ վաղ առավոտյան», «Խոսիր քեզ հետ» (1942 թ.) և այլն... 1941 թ. Նա սկսեց Բելասկոյում սեփական՝ Սարոյանի թատրոնի հիմնադրման աշխատանքները: 1941 թ. Նա փոքր-ինչ դադար է առել իր թատերական գործունեությունից, քանի որ ծնունդից է եղել շոկվուդում ֆիլմի սցենարի ստեղծմանը, որը «Մարդկային կատակերգություն» էր: Նա վաճառեց սցենարը հանրահայտ էմ. Ջի. Էմ-ին (MGM) 60 հազար դոլարով, սակայն հետագայում, երբ մերժվեց Սարոյանի՝ ֆիլմի ռեժիսորն ու պրոդյուսերը լինելու պահանջը, Նա առաջարկեց ավելի բարձր արժեքով հետ գնել սցենարը: Ստուդիան հրաժարվեց այդ գործարքից: Միևի Ռոմիի գլխավոր դերակատարմամբ այս ֆիլմն իսկապես հիթ դարձավ, սակայն Սարոյանը այնքան էլ չհավանեց կինոնկարը: Նա սցենարը վերածեց վեպի, որն էլ դարձավ նրա ամենամեծ հաջողություն ունեցած գիրքը: 36 տարեկանում «Մարդկային կատակերգություն» կինոնկարի սցենարի համար Նա արժանացավ ամերիկյան կինոակադեմիայի Օսկար մրցանակին:



The marriage and World War II now intervened. In October 1942, he allowed himself to be drafted into the army, despite his pacifist views, and early in the following year, he married Carol Marcus, a young society girl and a friend of Oona O'Neill (who was to marry Charlie Chaplin). After the birth of their son Aram, Saroyan was posted to England. In London in 1944 he was allowed time off to write a novel to promote Anglo-American relations. Finally discharged in September 1945 he later said that he had fought the army for three years and won.

The late nineteen forties were to be very difficult years for William Saroyan. He had lovingly dedicated a 1944 collection of short stories, "Dear Baby", to his wife, but after the birth of daughter Lucy in 1946, the marriage began to fail. At the same time, his literary career went into steep decline. He had already ceased offering plays to Broadway producers because of his intense dissatisfactions with the system, where the only priority was given to money, and the critics disliked "Wesley Jackson" when it finally appeared in 1947. Fashions had changed, hastened by the impact of the war, and Saroyan was suddenly almost old hat.

The marriage of Saroyan and Carol Marcus was not peaceful, after six years of life, the couple divorced and married again a year later. The second marriage also took place at the Armenian Church, but soon afterwards, they divorced. Saroyan's literary career began to fade away as well.



Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Նա ամուսնանում է երիտասարդ Քերոլ Մարկուսի հետ, որը դերասանուհի էր և Չառլի Չապլինի կնոջ Ունա Օ'Նիլի ընկերուհին: 1942 թ. հոկտեմբերին Նրան զորակոչում են բանակ: Սարոյանին որդու՝ Արամի ծնվելուց հետո ուղարկում են Անգլիա: 1944 թ. Նա ժամանակ է գտնում և մի վեպ գրում անգլո-ամերիկյան հարաբերությունների մասին: 1945 թ. սեպտեմբերին Նրան զորացրում են, հետագայում՝ Նա ասել է, որ երեք տարի կռվել է բանակի դեմ ու հաղթել:

1940 ական թթ. ավարտը բավականին բարդ ժամանակշրջան էր Սարոյանի համար: 1944 թ. գրում է «Սիրելի փոքրիկ» խորագրով պատմվածաշարը, որը նվիրվել էր կնոջը: Սակայն 1946 թ. Նրանց դուստր Լյուսիի ծնվելուց հետո ամուսնությունը սկսում է անկում ապրել: Միևնույն ժամանակ ճգնաժամային բարդ իրավիճակ է սկսվում Նաև Սարոյանի գրական ստեղծագործական կյանքում: Նա սկսել էր Բրոդվեյի պրոդյուսերներին պիեսներ չառաջարկել, քանի որ ամբողջովին հիասթափված էր գրական այդպիսի միջավայրից, որտեղ առաջնահերթությունը տրվում էր միայն փողին: 1947 թ. Նա ներկայացնում է իր «Ուեսլի Ջեքսոնը», որը սակայն մերժվում է քննադատներից: Կարծես նորաձևությունը ակնթարթորեն փոխվել էր, և այժմ Սարոյանը նման էր հին ու նորաձևությունից դուրս եկած գլխարկի:

In 1949 he felt sufficiently aggrieved to walk out and leave immediately for Europe.

In Paris, in a mood of despair, he wrote "The Assyrian." Soon afterwards he had a surprising worldwide hit in collaboration with Ross Bagdasarian with a pop song, 'C'mon-a My House,' sung by Rosemary Clooney. Saroyan probably never recovered fully from the psychic blows of his unhappy marriage and the three wasted years in the army, but at Malibu in the fifties, he regained his soul sufficiently to arrest the alarming decline of his literary fortunes.

In 1952 he published "The Bicycle Rider in Beverly Hills", the first of his several book-length experiments in autobiography. This book was followed by a warm-hearted novel of the theatre, written for his daughter "Mama, I Love You" (1956); and a book for his son, "Papa, You're Crazy" (1957).

He had another play on Broadway, "The Cave Dwellers", in 1957. In that period he return to the world of cinema and there were a number of television productions and adaptations of his works. Meantime he was publishing short stories and articles in a wide variety of magazines and newspapers. He left Malibu in 1958 and headed for Europe, with no clear plan, only the vague thought that he would buy a vineyard and perhaps even forget about writing. His typewriter stayed in its case for a period. However, gam-



bling losses used up the vineyard money and at length he found himself in Paris, faced once more with the unwelcome prospect of trying to work himself out of debt. (His book “Not Dying” (1963) is mainly concerned with this period.) He contacted the film producer Darryl Zanuck, who was then residing in Paris, and uncharacteristically agreed to write a play for which he was paid six thousand dollars.

“The Paris Comedy” or “The Secret of Lily” (1960) was a big hit in German translation in Vienna, and later in Berlin. Typically, though, the money earned was not used for the careful paying off debts. ‘I certainly didn’t gamble away every penny,’ he wrote in a memoir, in a flippant mood. ‘I drank some of it away, and I bought a raincoat.’

He was invited to write an autobiography and, believing it would pay his debts, he produced his most complete and conventionally arranged autobiographical work, “Here Comes, There Goes, You Know Who”. However, on his own admission the book did rather poorly.

In 1964, thirty years after the publication of his first book, he repeated his early effort of writing a new story or piece each day for a whole month, keeping at the same time a daily journal in which he discussed his present life and work in relation to January 1934. This was published alongside the original stories as “After Thirty Years: The Daring Young Man on the Flying Trapeze.” Meanwhile his plays were being taken up with enthusiasm in Eastern Europe, notably in Czechoslovakia.

Սարոյանի և Քերոլ Մարկուսի ամուսնական կյանքը խաղաղ չի եղել. 6 տարի համատեղ կյանքից հետո զույգը բաժանվում է, մեկ տարի անց կրկին ամուսնանում: Երկրորդ ամուսնության ժամանակ կրկին պսակադրվում են հայկական եկեղեցում, սակայն շատ չանցած կրկին բաժանվում: Շուտով Սարոյանի գրական գործունեությունն սկսում է անկում ապրել: 1949 թ. ստեղծված իրավիճակից ազատվելու համար որոշում է մեկնել Եվրոպա: Որոշ ժամանակ ապրում է Փարիզում: Այնտեղ, լինելով անկումային տրամադրության մեջ, նա գրում է «Ատրին» պատմվածքը:

Շուտով իր զարմիկի՝ Ռոս Բադդասարյանի երաժշտության համար գրած նրա՝ «Արի իմ տուն» երգը անսպասելիորեն հիթ է դառնում, որը կատարում էր այժմ աշխարհահռչակ դերասան Ջորջ Քլունիի հորաքույրը՝ այդ տարիներին հայտնի երգչուհի Ռոզմարի Քլունին: 50-ականներին Մալիբուում նրան հաջողվում է ինչ-որ չափով վերականգնել հոգեկան ներդաշնակությունը և 1952-ին գրել «Հեծանվորդը Բևերլի Հիլզից» (1952 թ.) ստեղծագործությունը, որն ինքնակենսագրական էր: Դրան հետևեցին դստեր համար գրած՝ «Մայրիկ, ես քեզ սիրում եմ» և որդուն նվիրված՝ «Հայրիկ, դու խենթ ես» գրքերը:

1957 թ. Սարոյանը Բրոդվեյում ներկայացրեց «Զարանձավի բնակիչները» պիեսը: Այդ շրջանում նա վերադառնում է կինոյի աշխարհ. նրա ստեղծա-



գործություններից մի շարք էկրանավորումներ եղան: Միևնույն ժամանակ, նա շարունակում էր հրատարակել կարճ պատմվածքներ ամենահայտնի ամսագրերում ու թերթերում: 1958 թ. նա ուղևորվեց դեպի Եվրոպա, առանց հստակ ծրագրերի՝ միայն մի աղոտ գաղափար գլխում, որ մի խաղողի այգի կգնի ու գուցե մոռսա գրելու մասին: Գրամեքենան էլ որոշ ժամանակ մնաց պայուսակում: Սակայն մոլախաղի պատճառով նա կորցրեց նաև խաղողի այգու համար նախատեսված գումարը և կրկին պարտքեր կուտակելուց հետո Սարոյանը հասավ Փարիզ: Այստեղ երկար ժամանակ նա հայտնվել էր կրկին պարտքերը մարելու խնդրի առջև: (Նա «Չմեռնել» գրքում նկարագրում է հենց այդ շրջանը): Այնուհետև նա կապ հաստատեց փարիզաբնակ կինոպրոդյուսեր Դարիլ Չանուկի հետ և համաձայնվեց կինոնկարի սցենար գրել, որի համար նրան վճարեցին վեց հազար դոլար:

«Շները կամ Փարիզյան կատակերգություն» պիեսը փետնայում, ապա Բեռլինում՝ գերմաներեն թարգմա-

Gradually he brought his gambling and drinking under reasonable control, though there were lapses. During a three month stay in London in 1966, (occupying a flat with his son and daughter, both young adults), he managed to get through twenty thousand dollars. By 1967, he was able to declare in “Days of Life and Death and Escape to the Moon” (1970): ‘I’m free... I’ve paid all debts, I’m earning a living.’ He had acquired a second home in Fresno (though he hated what the developers had done to the city over the years).

In the late sixties, he published a collection of articles, essays, short stories, memoirs, poems and short plays. Indulging his fondness for long titles to the full, he called the collection “I used to Believe I Had Forever, Now I’m Not So Sure” (1968). In his last book of the sixties he used the autobiographical device of writing a series of ‘letters’ to various people, eminent and otherwise and most now dead, who had either influenced him or remained in his memory



Նույթամբ, մեծ հաջողություն է ունենում: Սակայն, նա արդեն սովորույթ էր դարձրել աշխատած գումարը պարտքերը մարելու համար չծախսել: «Ես, իհարկե, մոլախաղով չէի տարված,– գրել է Սարոյանը իր հուշերում, – մի մասը ես վատնել եմ խմիչքի վրա, մնացածով ինձ անձրևանոց եմ գնել»:

Նրան առաջարկում են գրել ինքնակենսագրական գրքեր, և Սարոյանը, կարծելով թե այդպիսով նա ի վիճակի կլինի վճարել հարկերը, գրում է իր ամենա–ծավալուն ինքնակենսագրականը: Սակայն հենց Սարոյանի համոզմամբ գիրքն այնքան էլ մեծ հաջողություն չի ունենում:

1964թ. իր առաջին գիրքը հրատարակելուց երեսուն տարի հետո, նա մեկ ամիս շարունակ ջանք չխնայեց ամեն օր ինչ որ բան գրելու համար, միաժամանակ նա մի օրագիր էր պահում, որտեղ ներկայացնում էր իր առօրյան ու համեմատում իր կյանքը 1934 թ. հետ: Այն տպագրվեց «Երեսուն տարի անց: Խիզախ պատանին թռչող ճոճաճողին» պատմությունների հետ միաժամանակ: Ուրախալի էր նաև այն, որ Նրա պիեսները լավ ընդունելության էին արժանանում Արևելյան Եվրոպայում, հատկապես՝ Չեխոսլովակիայում:

Աստիճանաբար նա սկսում է վերահսկել իր մոլուցքը խմիչքի ու մոլախաղի նկատմամբ, սակայն երբեմն


for some important reason. He called the book “Letters from 74 rue Taitbout” (1969).

These autobiographical books turned into a series: next came “Places Where I’ve Done Time” (1972). This trend continued in “Sons Come and Go, Mothers Hang in Forever” (1976); “Chance Meetings” (1978), with its lovely memories about some exceptional people he had met.

In 1975, at Hay Film Studio, the Armenian filmmaker Levon Grigoryan directed the film “My Heart is in the Highlands” based on the eponymous play and a short story titled “The Summer of the Beautiful White Horse”.

Although his career with stage and television productions approached its end, “The Cave Dwellers” (1957) remained favoured in Czechoslovakia, Romania, Finland, Spain, Germany and Poland.

With the gradual intrusion of a bitter tone in his memoirs went a growing preoccupation with death, as is indicated by some of the titles alone. This preoccupation reached its fullest expression in his last published book, “Obituaries” (1979). In 1979, film director and screenwriter Marat Varzhapetyan shot a film titled “Hello Out There” (1942) in the Yerevan film studio based on William Saroyan’s screenplay.



տապալումներ , իհարկե, լինում էին: Ինչպես օրինակ՝ Լոնդոնում բնակվելու երեք ամիսների ընթացքում. ի դեպ այնտեղ նա ապրում էր իր որդու և դստեր հետ, որոնք արդեն երիտասարդներ էին, Սարոյանին հաջողվում է բաժնի հազար դոլար վաստակել: 1967 թ. «Կյանքի և մահվան օրեր կամ փախուստ դեպի լուսին» ստեղծագործության մեջ նա արձանագրում է. «Ես ազատ եմ, ես վճարել եմ իմ բոլոր պարտքերը և հիմա ինձ մնում է միայն ապրուստ վաստակել»: Ֆրեզնոյում ծեռք է բերում երկրորդ տունը, թեև Նրան չափազանց բարկացնում էր այն, թե ինչպես էին աղավաղել բաղաձայն տարիների ընթացքում: 60–ականների վերջին նա հրատարակում է հողվածների, ակնարկների, կարճ պատմվածքների, հուշագրությունների, պոեմների ու պիեսների ժողովածու: Հավատարիմ մնալով երկար վերնագրերի իր սովորույթին՝ Սարոյանն այն անվանեց « Ես հավատում էի, որ հավերժ էի, հիմա ես այնքան էլ համոզված չեմ»:

շարունակ աշխատել է Օնտարիոյի արվեստի պատկերասրահում, այնուհետև Նախագահել է կենտրոնին կից թատրոնը: Նա «Բիլ Կանադա» Նախաձեռնության հիմնադիր անդամ է. կազմակերպության նպատակը կանադական կինոնկարները ավագ դպրոցներում հասանելի դարձնելն է: Նրա՝ կինոարտադրությամբ զբաղվող «Էգո Ֆիլմ Արթ» ընկերությունը մասնակցել է կանադացի այնպիսի հայտնի ռեժիսորների աշխատանքներին, ինչպիսիք են Փիթեր Մեթյուսը և Գայ Մեդոուին: Էգոյանը Նախագահել է Նաև Հայաստանի «Ռսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը: 2009 թ. Մանհեյմի կինոփառատոնում Նա արժանացել է «Կինոյի վարպետ» մրցանակին: Էգոյանը Կինոֆիլմերի և գիտությունների ակադեմիայի, Ամերիկայի, Կանադայի ռեժիսորների գիլդիաների անդամ է, ինչպես նաև անդամակցում է Ամերիկայի և Կանադայի գրողների գիլդիաներին, ու Կանադայի Արվեստի արքայական ակադեմիային: Ներկայում Նա ապրում է Տորոնտոյում՝ կնոջ՝ ղերասանուհի Արսինե Խանջյանի և որդու՝ Արշիլի հետ, որին անվանակոչել են ի պատիվ ամերիկահայ նկարիչ Արշիլ Գորկու:

Committee of Human Rights Watch Toronto Chapter and was honoured with a Tribute at the 2016 HRW Film Festival. He served on the Board of the Art Gallery of Ontario for ten years, following a decade as President. He is a Founding Board Member of REEL CANADA, an initiative to bring Canadian films into high schools. His production company, Ego Film Arts, has implemented projects with such respected Canadian filmmakers as Peter Mettler and Guy Maddin. Egoyan was the President of the Golden Apricot Film Festival in Armenia. In 2009, he won a 'Master of Cinema' award at the Mannheim Film Festival. Egoyan is a member of the Academy of Motion Picture Arts and Sciences, the Directors Guild of America, the Directors Guild of Canada, the Writers Guild of America, the Writers Guild of Canada, and the Royal Canadian Academy of Art.

He currently lives in Toronto with his wife Arsinée Khanjian and their son Arshile, the latter named after the Armenian-American painter Arshile Gorky.




ՀԱՌԼ
ԺԵՐԱՐ

CHARLES GÉRARD

PIERRE VARET
ALAIN GARROT
ROGER HANIN
PAUL FRANKEUR

une
BALLE
dans le
CANON

un film de
CHARLES GERARD - **MICHEL DEVILLE**
scénario original et dialogues d'ALBERT SIMONIN
adaptation d'ALBERT SIMONIN et CH GERARD
avec le concours d'**HAZEL SCOTT**
et **GERARD BUHR**
avec **DAN ZIGLER** - **BEAUF-LE-REAL**
présenté par **GILBERT BECAUD**



→ Ժերարն իր պատանեկության տարիներին բռնցքամարտով է զբաղվել և հենց բռնցքամարտի խմբակում էլ ծանոթացել է 16-ամյա Ժան-Պոլ Բելմոնդոյի հետ:

Շառլ Ժերարը (Նուբար Աճեմյան) ծնվել է 1926 թ. դեկտեմբերի 1-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Տղայի ծնվելուց դեռևս տարիներ առաջ, Հայոց ցեղասպանության հետևանքով ընտանիքը Թուրքիայից տեղափոխվել է Ֆրանսիա: Սկզբում նա աշխատել է որպես վավերագրական ֆիլմերի օպերատոր, հետո՝ ռեժիսոր, և մի քանի կարճամետրաժ ֆիլմ է նկարահանել: Դերասանի կարիերան սկսել է 20 տարեկանից՝ խաղալով «Ճակատագիր» և «Բոլորն ուզում են սպանել»:

French actor and director of Armenian origin Charles Gérard (Noubar Adjemian) was born on December 1, 1926, in Marseilles, France. Some years before the boy was born, his family fled from Turkey because of the Armenian Genocide. At first, he worked as a documentary filmmaker, and then directed several short films. At age 20, he pursued the career of an actor and appeared in the films "Destiny" and "Everyone Wants to Kill Me". His recognition came with the film "A bullet in the barrel" (1958).



ինձ» կինոնկարներում: Նրան հռչակ և ճանաչում է բերել «Փամփուշտը տակառում» կինոնկարը (1958 թ.):

Ժերարն իր պատանեկության տարիներին բռնցքամարտով է զբաղվել և հենց բռնցքամարտի խմբակում էլ ծանոթացել է 16-ամյա Ժան-Պոլ Բելմոնդոյի հետ:

«Ես այժմ էլ եմ սիրում բռնցքամարտը, – ասել է Շառլը, – երիտասարդ տարիքում 9 ամգամ մենամարտել եմ Բելմոնդոյի հետ, հինգ մենամարտում հաղթող է ճանաչվել նա, երեքն ավարտվել է ոչ-ոքի»:

1949 թ. Բելմոնդոն սպորտը լքելու և ընկերոջ օրինակին հետևելու որոշում է կայացրել և մուտք է գործել կինոյի աշխարհ. Ժերարը մշտապես աջակցել է նրան: Նրանց ընկերությունը տասնամյակների պատմություն ունի:

Երկար ժամանակ Ժերարն ինքն էլ չէր կողմնորոշվում շարունակել պրոֆեսիոնալ բռնցքամարտի կարիերան, թե ընտրել կինեմատոգրաֆիան: Արդյունքում թեև հաղթել է կինոն, բայց սպորտը միշտ էլ գրավել է նրան: Ժերարը բազմաթիվ վավերագրական կինոնկարներ է նկարահանել սպորտի և մարզիկների մասին, ինչպես նաև «Կուլիսների հետևում» ամսագրում շարունակաբար վարել է սպորտային սյունակ:

Ժերարը խաղացել է Պիեռ Ռիշարի, Լինո Վենտուրայի,

As a teenager, Gérard practiced boxing where he got acquainted with Jean-Paul Belmondo who was then 16 years old. “I still love boxing” once said Charles. “When I was young I fought with Belmondo for nine times: he was a winner in five matches, three matches ended in a draw”.

In 1949, Belmondo decided to leave the sport and follow the example of his friend, entering the world of cinema. Their friendship has a history of decades.

For a long time Gérard himself was thinking over pursuing the career of a professional boxer or becoming a cinematographer. Although professional boxing had always attracted Gérard he chose cinematography. Gérard has made many documentary films about sports and athletes, and worked as a reporter for “Les Coulisses de l’exploit”, a renowned magazine about sports.

He has played with world-famous actors such as Pierre Richard, Lino Ventura, Belmondo and worked with such famous French film directors as Francis Veber, Claude Lelouch, Henri Verneuil and others. The most famous works in his filmography are “Bolero” (1981), “The Toy” (1976), “Kamikadze” (1986), “Animal” (1977), “Body of my enemy” (1976), “Far West” (1973), “Navarro” (1989) and many others.



Ժան-Պոլ Բեյմոնդոյի և այլ աշխարհառջակ դերասանների հետ: Աշխատել է ֆրանսիական կինոյի այնպիսի ռեժիսորների հետ, ինչպիսիք են Անրի Վեռնոյը, Ֆրենսիս Վեբերը, Կլոդ Լելուշը և այլք: Ժերարի կինոցանկում ամենահայտնի աշխատանքներից են՝ «Բոլերոն» (1981 թ.), «Խաղալիք» (1976 թ.), «Կամիկաձե» (1986 թ.), «Հրեշը» (1977 թ.), «Թշնամուս դիակը» (1976 թ.), «Վայրի Արամուտք» (1973 թ.), «Կոմիսար Նավարո» (1989 թ.) հեռուստաֆիլմը և մի շարք այլ կինոնկարներ:

1970 թ. ռեժիսոր Կլոդ Լելուշը Նրան հրավիրել է Նկարահանվելու «Անպիտանը» կինոնկարում, որի Նկարահանումների ընթացքում Նրանք մտերմացել են: Դերասանը Նկարահանվել է Նրա գրեթե բոլոր կինոնկարներում՝ «Շնորհավոր Ամանոր» (1973 թ.), «Ամուսնություն» (1974 թ.), «Չգուշացեք ավազակներից» (1986թ.), «Կինը և տղամարդը 20 տարի անց» (1986թ.), «Լինում են օրեր, լինում են գիշերներ» (1989 թ.) և այլն (ընդհանուր 18 կինոնկարում):

Ժերարի հայտնի ստեղծագործությունների շարքում է «Գնդակը փողի մեջ» կինոնկարը, որը Նա Նկարահանել է իր ընկերոջ՝ ռեժիսոր Միշել Դևիլի հետ: Այնուհետև Նկարահանել է կինոնկարներ Ժան Ռոջֆորի, Բերտրան Բլերի և Ռոբեր Չոսեյնի մասնակցությամբ: 70-ականների սկզբին Շառլը Ժամանակավորապես դադար է տվել ռեժիսոր-սցենարիստի մասնագիտությանը և կրկին սկսել է Նկարահանվել կինոնկարներում: Նրա գործընկերները հավաստիացնում են, որ Ժերարը շատ պարզ է ընկերական հարաբերություններում: Գեղեցիկ խոսելու ու մարդկնաց համոզելու իր ընդունակության շնորհիվ, Նա հեշտությամբ է շփվում մարդկանց հետ:

Ժերարի խոսքի վարպետ լինելու և համոզելու կարողության մասին լեգենդներ են պատմում: Մտերիմները պատմում են, որ մի անգամ, երբ Իրանի շահը երկրի

In 1970, film director Claude Lelouch invited him to act in the film “The Crook”. During the film production they became friends, and after that the actor was shot in almost all the films by Lelouch: “Happy New Year” (1973), “Marriage” (1974), “Attention bandits!” (1986), “Man and a Woman: 20 Years Later” (1986), “There Were Days... and Moons” (1989) etc... in 18 films, in total. Among his well-known works is the thriller “A Bullet in the gun barrel” (1958) which he made together with his friend and director Michel Deville. Then followed films with the participation of Jean Rochefort, Bertrand Blier and Robert Hossein. In the early 70’s, Charles temporarily left the profession of the director–screenwriter, again starting to act in films. Claude Lelouch had always singled out his ability to talk and persuade people and the following story stands to prove it. His friends say that once Iran’s Shah wanted to film a movie for his country’s propaganda. It was difficult for him to choose a director for this responsible production. And while the French delegation was thinking it over, Charles Gérard eagerly approached Shah and persuaded him that he would not find a better director for the film than Claude Lelouch. They say Shah was first furious as nobody had dared talk to him like that before; however, he agreed to the proposal. As a result, the film “Iran” was shot in 1971 which subsequently received six international awards.

When his career began to decline, his friend Belmondo remembered the old days, and assisted Charles. “Jean-Paul always helped me. He took care of me. When he was invited to role, he would insist on taking Gérard for another one and would add: “If you do not take Charles into the picture, I will not come either.” Only in 1970–80, he starred in about 20 films. Overall, he played in 82 films.

Gerard is now 91 years old.




քարոզչության Նպատակով ցանկացել է կինոնկար Նկարահանել, դժվարացել է այդ պատասխանատու գործի համար ռեժիսոր ընտրելու հարցում: Եվ ահա, մինչ ֆրանսիական պատվիրակությունը մտածում էր, ինչ անել, Շառլ Ժերարն անկաշկանդ մոտեցել է շահին և համոզել Նրան, որ այդ աշխատանքի համար ավելի լավ ռեժիսոր, քան Կլոդ Լելուշն է, Նա չի գտնի: Ասում են շահը սկզբում խոժոռվել է, քանի որ ոչ ոք երբեք Նման տոնով չէր խոսել իր հետ, սակայն համաձայնվել է, և արդյունքում 1971 թ. Նկարահանվել է «Իրան» կինոնկարը, որը հետագայում արժանանացել է միջազգային 6 մրցանակի:

Երբ դերասանի կարիերան սկսել է անկում ապրել, Նրա ընկեր Բեյմոնդոն, հիշելով հին օրերը, աջակցել է Շառլին: «Ժան-Պոլը միշտ օգնում էր ինձ: Նա իմ մասին հոգ էր տանում: Երբ Նրան հրավիրում էին կինոնկարում խաղալու, Նա ասում էր,– Այս դերը Շառլի համար է: Եթե չընտրեք Շառլին, ես էլ չեմ մասնակցի»: Միայն 1970–80-ական թվականներին Նա Նկարահանվել է մոտ 20 կինոնկարում: Ընդհանուր առմամբ խաղացել է 82 կինոնկարում:

Ժերարն այժմ 91 տարեկան է:






ԵՑԻ ԿԱԿԱԼԵՐՈՎԻՉ

JERZY KAWALEROWICZ

matka
JOANNA
aniołowa

film prod. polskiej
z opowiadań J. Iwaszkiewicza

reżyseria
J. Kawalerowicz
w rolach głównych
I. Winnicka,
M. Voit,
A. Ciepielewska



→ Բայց, քանի որ
ես ապրել եմ
շուրթոստի զոհ
դարձած բազմաթիվ
մարդկանց հետ,
հիշում եմ նրանց
մասին ամեն ինչ:


ԵՃԻ Կավալերովիչը ծնվել է 1922 թ. հունվարի 19-ին Լեհաստանի Գվիզդեց քաղաքում: Նրա պապերն Անիից գաղթել և բնակություն են հաստատել Լվովում: Լեհական պետությանը մատուցած ծառայությունների համար նրանք արժանացել էին ասպետի աստիճանի, դրանից էլ առաջացել է նրանց Կավալերովիչ ազգանունը: Մասնագիտական կրթությունն ստացել է Կրակովի կինոյի Նորաբաց ինստիտուտում (1946 թ.): Դա տղայի առաջին առնչությունն էր կինոարտադրության հետ: Չետազայում Նա ուսումը շարունակել է Նույն քաղաքի Գեղարվեստների ակադեմիայում, որն ավարտել է 1948 թ.: Այստեղ սովորելուց մեկ տարի անց, Նկատելով տղայի ունակությունները, Նրան, որպես ռեժիսորի օգնականի, ներգրավվել են կինոարտադրության մեջ: ԵՃԻԻ առաջին աշխատանքներից է Լեհական կինոյի հիմնադիրներից Վանդա Յակոբովսկայի Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարի մասին պատմող կինոնկարը, որը կոչվում է «Վերջին փուլը» (1948 թ.): Կինոնկարի պլուժեն Օսվենցիմում գերմանացիների


Jerzy Kawalerowicz was born in Gwoździec, Poland, on January 19, 1922. His predecessors had migrated from Ani and lived in Lvov and received a knightly degree for the services to the Polish State. He was among the first students of the Krakow Film Institute (1946), where he had his first experience in the field of film production. Later he continued his studies at the Academy of Art, graduating in 1948. His talent was soon noticed and, shortly after his graduation, he assisted in directing Wanda Jakubowska's "The Last Stage" (1948). The film features women working in the Auschwitz camp at the end of the war.

"In the town where I was born, 60 percent of the people were Jewish, 30 percent were Ukrainian and 10 percent were Polish. It was a very typical Galician town, which was totally destroyed by the Holocaust. Since I lived with many people who died in the Holocaust, I remember everything about them. They were the basis for my film "Austeria", once said the filmmaker.

After working as an assistant director, he made his directorial debut with the 1951 film "Gromada" ("The Village Mill").

The Polish films that emerged from the rubble of the





George Zelnik · Barbara Bryl

Director Jerzy Kawalerowicz Producer "Kadr" Film Unit, Film Polski

Eastmancolour Dialiscope


KGH presentation



համար աշխատող կանանց ու պատերազմի ավարտի մասին է: «Այն քաղաքը, որտեղ ես ծնվել եմ, բնակչության 60 տոկոսը հրեա էր, 30-ը՝ ուկրաինացիներ, իսկ մնացած 10-ը՝ տոկոսը՝ լեհեր: Այն Գալիցիային շատ բնորոշ քաղաք էր, որն ամբողջությամբ ոչնչացվեց Չոլոթստի հետևանքով: Բայց, քանի որ ես ապրել եմ Չոլոթստի գոյի դարձած բազմաթիվ մարդկանց հետ, հիշում եմ նրանց մասին ամեն ինչ: Չենց նրանց պատմություններն են հիմք դարձել իմ «Պանդոկը» կինոնկարի համար», – պատմել է կինոռեժիսորը:

Օգնականի պաշտոնից հետո, որպես ռեժիսոր, առաջին աշխատանքը 1951 թ. նկարահանած «Գյուլի ջրաղացը» կինոնկարն է: Լեհական կինոարտադրությունը կամաց-կամաց վերածնվում էր նացիստական հալածանքներից, գետտոյի սարսափներից հետո: Կավալերովիչի կինո-նկարները բացառիկ էին: Ռեժիսորն այն վառ անհատականություններից է եղել, որը վերակառուցել է լեհական կինոն հետպատերազմյան շրջանում: Նրա՝ կարծրատիպերին չենթարկվելու ջիղը ծնունդ է տվել արվեստի յուրահատուկ տեսակի և էլեկտիզմին՝ Նոր արժեք է հաղորդել: «Ես ոչ մի գեղարվեստական հավատամք չունեմ: Կարծում եմ անհնար կլինի իմ աշխատանքներում տեսնել իմ վարպետների ազդեցությունը: Ավելի ճիշտ, ես անիշխանական եմ իմ արվեստում», – գրել է նա:

Կավալերովիչին համաշխարհային ճանաչում են բերել Նախ Լեհական կինոդպրոցում ունեցած ներդրումները,



war tended to deal with the Nazi occupation, the horrors of the ghetto and the heroes of the resistance. However, the films directed by Jerzy Kawalerowicz remained outside the mainstream. He was one of the directors who rebuilt the Polish film industry in the years after the Second World War. Kawalerowicz's dislike of dogma extended to his own art and he saw eclecticism as a virtue: "I have no artistic creed . . . I do not think it possible to find in my work the influence of any school or director. Rather I am anarchical in my art."

Kawalerowicz won worldwide recognition with his contributions to the Polish Film School as well as his films "Shadow" (1956) and "Night Train" (1959) constitute some of that movement's best works.

Kawalerowicz is best known for the film "Mother Joan of the Angels" (1961), which won the Special Jury Prize at Cannes, starring the director's wife, the Polish actress Lucynna Winnicka. Film critics consider this Lucynna's best role. Jerzy Kawalerowicz was noted for his powerful, detail-oriented imagery and the depth of ideas in his films.

The Oscar-nominated "Pharaoh" (1965) was a superb artistic recreation of the reality of Ancient Egypt.

From 1956, Jerzy Kawalerowicz headed the "Kadr" Film Studio – one of the most influential Polish film production and distribution companies. Kawalerowicz supported

ապա Նան՝ «Ստվեր» (1956 թ.) և «Գիշերային գնացք» (1959թ.) կինոնկարները, որոնք համարվում են այդ ժամանակշրջանի լավագույն աշխատանքներից: Նրան մեծագույն հաջողություն է բերել 1961 թ. Նկարահանած «Մայրապետ Իոհաննան ի հրեշտակաց» կինոնկարը, որը Կաննի կինոփառատոնում արժանացել է ժյուրիի հատուկ մրցանակի: Կինոնկարում գլխավոր դերում հանդես է եկել ռեժիսորի կինը՝ լեհ դերասանուհի Լյուցինա Վիննիցկայան: Կինոքննադատներն այս դերակատարումն են համարել դերասանուհու լավագույն դերը:

Եժի Կավալերովիչը հայտնի է հզոր և մանրակրկիտ արտացոլումների, ինչպես նաև իր կինոնկարներում արտահայտած գաղափարների խորության շնորհիվ:


Օսկարի առաջադրված «Փարավոն» կինոնկարը (1965թ.) հիմնալի բլոբբաստր է, որտեղ գեղարվեստականորեն արտացոլվել է շին եգիպտոսի իրականությունը:

1956 թ. Եժի Կավալերովիչը ղեկավարել է «Կադր» կինոստուդիան, որը լեհական կինոյի պատմության

his younger colleagues with his knowledge and directing experience, and he often used his authority to protect produced films from political interference. As a long-time president of the Association of Polish Filmmakers, he gained recognition and respect of the entire film industry. He always resisted pressures from the communist administration to produce propaganda films. The Studio produced some of the best Polish films by Andrzej Wajda, Tadeusz Konwicki and Juliusz Machulski.

From 1965–1975 he was a member of the jury at the Moscow International Film Festivals. At the 11th Moscow International Film Festival he was awarded with the Honorable Prize for the contribution to cinema.

In 1976, he was the head of the jury at the 26th Berlin International Film Festival. Great attention to detail was given to the historical drama “Death of a President” (1977), in which he reconstructed the 1922 assassination of the first President of Poland Gabriel Narutowicz. The film won the Silver Bear for an outstanding artistic contribution at the 28th Berlin International Film Festival in 1978.



մեջ ամենանշանակալի հաստատություններից էր: Լեհական կինոդպրոցի լավագույն սմուշները հենց այստեղ են ստեղծվել: Ռեժիսորը մշտապես աջակցել է երիտասարդ կոլեգաներին՝ Նրանց փոխանցելով իր փորձն ու հմտությունները: Երբեմն իր հեղինակության շնորհիվ նա կարողացել է քաղաքական ճնշումներից պաշտպանել երիտասարդների Նկարահանած կինոնկարները: Երկար տարիներ Նախագահելով Լեհաստանի կինոգործիչների ասոցիացիան՝ Նա այդ ոլորտում հարգանք ու ճանաչում է վայելել: Նա մշտապես մերժել է կոմունիստական վաչակարգի՝ քարոզչական կինոնկարներ Նկարահանելու ճնշումները: Նրա ստուգիայում են կինոնկարներ Նկարահանել այնպիսի հեղինակավոր լեհ ռեժիսորներ, ինչպիսիք են Անջեյ Վայդան, Տադեուշ Կոնվիցկին և Յուլիուշ Մախուլսկին: 1965 և 1975 թթ. Նա եղել է Մոսկվայի միջազգային կինոփառատոների ժյուրիի անդամ, իսկ 1976 թ. Նախագահել է Բեռլինի 26-րդ միջազգային կինոփառատոնը: Մոսկվայի 11-րդ կինոփառատոնում Նա ժյուրիի անդամ էր և կինոյում ունեցած իր ավանդի համար արժանացել է պատվավոր մրցանակի: Նա մեծ նվիրումով

Է Նկարահանել Նան «Նախագահի մահը» (1977թ.) պատմական դրաման, որը հետագայում համարվեց լեհական կինոյի դասական նմուշներից: Կինոնկարում Նա պատկերել է Նախագահ Գ. Նարուտովիչի սպանութունը: Բեռլինի 28-րդ կինոփառատոնում կինոնկարը արժանացել է Արծաթե արջ մրցանակի: Նրա վերջին «Ուր ես գնում» (2011թ.) կինոնկարը, տարվա ամենամեծ բյուջեով Նկարահանված լեհական կինոնկարն էր: Գեղարվեստական նվաճումների համար ռեժիսորն արժանացել է Փարիզի III-Նոր Սորբոնի համալսարանի (1998թ.) և Լոճի պետական կինոդպրոցի (2000թ.) պատվավոր դոկտորի կոչման: Ավելի քան հիսուն տարի Նա լեհական կինոյի մեծագույն գործիչներից էր: Լեհաստանի Լոճ քաղաքի փառքի ճեմուղում տեղադրվել է Կավալերովիչի աստղը: Ռեժիսորի առաջին այցը Հայաստան եղել է 1967թ.: Կնոջ՝ դերասանուհի Կիննիցկայայի հետ Նրանք մասնակցել էին Մոսկվայի միջազգային հերթական կինոփառատոնին, որի աշխատանքների ավարտից հետո, համաձայն ընդունված կարգի, օտարերկրյա արվեստագետներին առաջարկվում էր շրջագայել ԽՍՀՄ տարածքով, և Նրանք Նախընտրել էին Հայաստանը: Կինը տարբեր առիթներով բազմիցս այցելել էր Մոսկվա, Նան 2-3 անգամ՝ Երևան:



His last film, “Quo Vadis”, had the largest budget for Polish cinema as of 2011. For his artistic achievement, the director received honorary doctorates conferred by the University of Paris III – New Sorbonne (1998) and the State Film School in Łódź (2000).

For over fifty years, Jerzy Kawalerowicz had remained a major figure in Polish cinema. Jerzy Kawalerowicz's star was unveiled on the Avenue of the Stars in Łódź.


Kawalerowicz and his wife, actress Lucyna Winnicka, participated in the Moscow International Film Festival. As suggested by the accepted procedure foreign artists had an opportunity to travel through the USSR and they first visited Armenia in 1967. Winnicka had visited Moscow and Yerevan for several times before. She was really impressed by Armenian ancient culture; she did her best not to lose the opportunity to accompany her husband to Armenia to show him the remarkable cultural treasures of that time. In Yerevan Jerzy Kawalerowicz confirmed his Armenian roots expressing his pride and enjoyment for the outstanding achievements of the Armenian people in intellectual, scientific and cultural spheres.

Famous Armenian director Sergei Parajanov was also present at the meeting; he invited Kawalerowicz to “Armenfilm” studio to observe the shooting of the film “The

Տպավորված մեր հնամյա մշակույթից՝ Նա այս անգամ կամեցել էր առիթն օգտագործել և ամուսնուն ծանոթացնել հոհրդային Հայաստանի Նշանավոր մշակութային անկրկնելի զանձերին: Երևանում Կավալերովիչը հաստատել է, որ իր արմատները ևս հայկական են և հպարտ է դրանով, ուրախ է հայ ժողովրդի մտավոր, գիտական ու մշակութային ակնառու ձեռքբերումների համար:

Հանդիպմանը ներկա է եղել Նան անվանի հայ ռեժիսոր Սերգեյ Փարաջանովը, որը Կավալերովիչին հրավիրել է Հայֆիլմ կինոստուդիա՝ ծանոթանալու Նկարահանման ընթացքի մեջ գտնվող «Նռան գույնը» կինոնկարի աշխատանքներին: Կավալերովիչը սիրով ընդունել է հրավերը, Նշելով, որ քաջատեղյակ է միջազգային տարբեր կինոփառատոններից Փառաջանովի՝ աղմուկ հանած «Մոռացված Նախնիների սովերները» կինոնկարին:

Նա մահացել է 2007 թ. Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում:



Color of Pomegranates”. Kawalerowicz welcomed the invitation, noting that he was well-versed of Parajanov’s work “Shadows of Forgotten Ancestors” from international film festivals.

He died on December 27, 2007, in Warsaw, Poland.

ՌՈՒԲԵՆ ՄԱՄՈՒԼՅԱՆ

ROUBEN MAMOULIAN






→ Վեց տարեկան
հասակում
Ռուբենին ուղարկել
են Փարիզ՝ Միշել դը
Մոնտեն դպրոցում
ուսանելու:

Ռուբեն Մամուլյանը ծնվել է 1897 թ. հոկտեմբերի 8-ին
Թբիլիսիում, հայկական ընտանիքում: Վրաստանն այդ
ժամանակ գտնվում էր կայսերական Ռուսաստանի
կազմում: Նրա մայրը՝ Վերժինե Քալանթարյանը, հայ-
կական թատրոնի ռեժիսոր էր, իսկ հայրը՝ Չափար
Մամուլյանը՝ բանկի նախագահ:

«Առաջին թատերական գործերը, որ տպավորվել են
իմ մեջ պատանեկության օրերից, եղել են Թիֆլիսի հայ
թատերական խմբերի ներկայացրած՝ Շիրվանզադեի,

Rouben Mamoulian was born on October 8, 1897, in im-
perial Russian Georgia. His mother Virginia Kalantarian
was a director of the Armenian theater, and his father,
Zachary Mamoulian, was a banker.

“The first theatrical works that impressed me in my
youth were those of Shirvanzade, Sundukian, Levon
Shant and Manvelian presented by Armenian theatrical
groups in Tiflis,” said Rouben.



Սունդուկյանի, Լևոն Շանթի, Մանվելյանի գործերը»,-
ասել է Ռուբենը:

Վեց տարեկան հասակում Ռուբենին ուղարկել են Փարիզ՝ Միշել դը Մոնտեն դպրոցում ուսանելու: Հետագայում կրթությունը նա շարունակել է Ռուսաստանում: Մոսկվայի համալսարանում քրեական իրավունք ուսումնասիրելու տարիներին, նա սկսել է ներգրավվել թատերական կյանքին. սովորել է նաև Մոսկվայի արվեստի թատրոնին կից Կոնստանտին Ստանիսլավսկու աշակերտ եվգենի Վախթանգովի դասարանում: 1918-ին Մամուլյանը թիֆլիսում հիմնել է դրամատիկական ստուդիա: 1920 թ. նա ռուսական թատերախմբի հետ մեկնել է Անգլիա՝ հյուրախաղերի, և, խորհրդային ռեժիսի խուսափելով, որոշել է մնալ այնտեղ: Լոնդոնի համալսարանում շարունակել է ուսանել դրամատիկական արվեստ: 1922 թ. նա սկսել է ներկայացումներ բեմադրել անգլերենով, ապա մեկ տարի անց տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ մի քանի տարի օպերաներ ու օպերետներ է բեմադրել Ռոջեսթերի «Իսթման» թատրոնում (Լյու Յորք): 1920-ական թթ. վերջին Մամուլյանը դասավանդել է և բեմադրություններ արել Լյու Յորքում. ամերիկյան թատրոնի վրա մեծ ազդեցություն է գործել նրա՝ «Պորգի» բեմադրությունը:



At the age of six, he was sent to Paris to study at the lyceum of Michel de Montaigne. Later he continued his education in Russia. While studying criminal law at the University of Moscow, he became involved in the theatre and was trained at the Moscow Art Theatre under Yevgeny Vakhtangov and Konstantin Stanislavsky.

In 1918, Mamoulian founded a drama studio in Tiflis. In 1920, together with the Russian Repertory Company he toured to England, where he decided to reside in order to escape the Soviet regime oppressions and continued to study drama at the University of London. He began directing English stage productions in 1922. In 1923, he immigrated to the United States, where he directed grand operas and operettas at the Eastman Theatre in Rochester (New York) for several years.

During the late 1920s, Mamoulian was teaching and directing in New York City. His production of DuBose Heyward's Porgy (1927) made a deep impression on American theatre. While remaining a busy stage director during the late 1920s, Mamoulian directed the early sound film "Applause" (1929) at Paramount's Astoria Studio in Queens.





1920 թվականների վերջին արդեն լինելով բավականին պահանջված թատրոնի ռեժիսոր՝ Մամուլյանը Քուինսի «Փարամաունթ աստորիա» ստուդիայում նկարահանել է հնչյունային՝ «Ծափահարություններ» կինոնկարը: Կինոնկարի համար նա նկարահանումներն առաջին անգամ իրականացրել է ստուդիայից դուրս՝ ծայնամեկուսից խցիկում, նրան ամրացված է եղել տեսախցիկը, որն էլ բացառել է շարժումը: Այս նորարարությունը նրան միանգամից մեծ ճանաչում է բերել: Հոլիվուդ տեղափոխվելուց հետո առաջին կինոնկարը նկարահանել է 1931 թ., այն կոչվում էր «Քաղաքային փողոցները», որը վաղ շրջանի լավագույն զանգատերական ֆիլմերից էր: Թեև այն Մամուլյանի՝ «Փոքր կեսար» (1931), «Հանրային թշնամի» (1931), «Սպիով դեմք: Ազգի ամոթ» (1932) կինոնկարներին զիջում էր, այնուամենայնիվ, «Քաղային փողոցները» ավելի բարդ աշխատանք է, քան վերը նշվածները: Ավելի տպավորիչ է Ռոբերտ Լուիս Սթիվենսոնի վեպի հիման վրա նրա նկարահանած «Դոկտոր Ջեքիլը և միստր Հայդը» (1932 թ.) կինոնկարը. շատ կինոքննադատների կարծիքով, հենց սա է Մամուլյանի գլուխգործոցը:


Ռեժիսորի հաջորդ աշխատանքը՝ «Սիրիր ինձ այս գիշեր» (1932 թ.), գնահատվել է որպես վաղ շրջանի լավագույն մյուզիքլներից մեկը: Գլխավոր դերերում էին Մորիս Շվայլեն և Զանեթ Մաքդոնալդը:



«Փարամաունթ»-ում Մամուլյանի վերջին աշխատանքը՝ որպես ռեժիսոր՝ պրոդյուսերի, 1933 թ. նկարահանած «Երգ երգոց» հիմնալի կինոնկարն էր՝ Մամլեն Դիտրիխի մասնակցությամբ: Մամուլյանին ավելի մեծ հաջողությունն էր սպասում «Մետրո-Գոլդվին-Մայեր» ընկերությունում այդ դարաշրջանի մեկ այլ գերաստղ Գրետա Գարբոյի հետ: 17-րդ դարի Շվեդիայի միապետի կենսագրության հիման վրա Մամուլյանի նկարահանած «Քրիստինա թագուհի» կինոնկարի գլխավոր դերակատարը նա էր: Մամուլյանի «Մենք կրկին ապրում ենք» կինոնկարը, որը նկարահանել էր Լև Տոլստոյի «Հարություն» վեպի հիման վրա, միանշանակ չընդունվեց: Նա հեռացավ Հոլիվուդից և Բրոդվեյում բեմադրեց «Պորգի և Բես» ներկայացումը, որն էլ մեծ հռչակ բերեց նրան: Մեկ տարի անց նկարահանեց «Ուրախ հրոսակը» հիմնալի կատակերգությունը,

For “Applause”, he mounted wheels on the soundproof booth in which the camera was enclosed, thereby freeing it to move – an innovation that brought him quick recognition. Mamoulian’s first motion picture, after he relocated to Hollywood, was “City Streets” (1931), one of the better early gangster films. Although it was not as celebrated as “Little Caesar” (1931), “The Public Enemy” (1931), and “Scarface: The Shame of a Nation” (1932), “City Streets” is unarguably more visually sophisticated than any of them.

Even more impressive was “Dr. Jekyll and Mr. Hyde” (1931), the first sound version of the classic story by Robert Louis Stevenson, and many critics consider it to be Mamoulian’s masterpiece. Mamoulian’s next effort, “Love Me Tonight” (1932), has come to be regarded as one



որը Նյու Յորքի կինոքննադատները համարեցին տարվա լավագույն կինոնկար: Որոշ ժամանակ անց Մամուլյանն իր տաղանդը փորձել է «20-րդ Դար-Ֆոքս» ընկերությունում և 1940 թ. նկարահանել է «Չորրորդ Նշանը» կինոնկարը, գլխավոր դերերում էին Թայրոն Փաուերը և Բեգիլ Ռեդգրոունը: Սա արկածային կինոնկար է և համարվում է ամերիկյան կինոյի դասական նմուշներից: Նույնքան հաջողված աշխատանք էր Վինսենտե Բլասկո Իբանիեսի վեպի հիման վրա նկարահանված «Արյուն և ավազ» կինոնկարը, որը Վենետիկի կինոփառատոնում արժանացել է ժյուրիի հատուկ մրցանակի՝ լավագույն գունավոր կինոնկարի անվանակարգում: Նրա երրորդ աշխատանքը՝ ոչ այնքան մեծ հաջողություն գրանցած «Մատանիները Նրա մատներին» կինոնկարը, շենրի Ֆոնդայի և Ջենե Թիեռնիի մասնակցությամբ, ռոմանտիկ կատակերգությունն էր: «Լաուրա» կինոնկարի նկարահանումների ժամանակ ընդհարվելով հոլիվուդյան կինոընկերությունների հետ, Մամուլյանը վերադարձել է Բրոդվեյ, որտեղ 1943 թ. բեմադրել է հետագայում իսկական հիթի վերածված «Օկլահոմա» (1943) և «Կարուսել» (1945) մյուզիքլները: շետագայում նա նկարահանել է ևս երկու կինոնկար «Մետրո-Գոլդվին-Մայեր»-ի հետ՝ «Ամառային արձակուրդ» (1948) և «Մետաքսե գուլպաներ» (1957 թ.):

of the most accomplished of the early musicals. It starred Maurice Chevalier and Jeanette MacDonald. “The Song of Songs” (1933), Mamoulian’s last film for Paramount as a producer-director, offered a strong performance by Marlene Dietrich. Mamoulian had more luck for Metro-Goldwyn-Mayer (MGM) with another of the era’s iconic female stars, Greta Garbo in “Queen Christina” (1933), a biography of a 17th-century Swedish monarch.

“We Live Again” (1934) was a generally undistinguished adaptation of Leo Tolstoy’s novel “Resurrection”.

Having left Hollywood to win acclaim with his staging of “Porgy and Bess” (1935) on Broadway, Mamoulian returned with the whimsical comedy “The Gay Desperado” (1936), which was voted as the best film of the year by New York’s critics.

Mamoulian brought his talents to Twentieth Century-Fox and directed a swashbuckling adventure film “The Mark of Zorro” (1940), starring Tyrone Power, Linda Darnell, and Basil Rathbone. Equally distinguished was “Blood and Sand” (1941) based on a novel by Vicente Blasco Ibañez, which won a Special Jury Prize as the best color film at the Venice Film Festival. His third effort for Fox was

Երբ 1963 թ. Նա սկսել էր «20-րդ Դար-Ֆոքս»-ի համար «Կլետպատրա» -ի նկարահանման աշխատանքները, Նրան հեռացրել են աշխատանքից նկարահանման 6-րդ օրը: Մամուլյանը երբեք չէր հանդուրժում ստեղծագործական միջամտությունը, և ստուդիաների ղեկավարները, ի վերջո հանձնվում էին Նրա դեմ պայքարում: Անվիճելի է ամերիկյան կինոյի զարգացման գործում Նրա ունեցած ներդրումը:

1950-ականների վերջին Մամուլյանը վերջնականապես թողել է իր աշխատանքը: Այդ ժամանակ էլ Նա ակտիվորեն մասնակցել է ԱՄՆ-ում հայկական սփյուռքի համայնքային կյանքին: 1971 թ. այցելել է Խորհրդային Հայաստան: 1964 թ. գրել և հրատարակել է մանկական «Աբիգայլ» գիրքը: 1960 թ. փետրվարի 8-ին, կինոարտադրության ասպարեզում Նշանակալի ներդրման համար, Նա շուրջվուրդի Փառքի Վայն Սթրիթ 1709 հասցեում

the less successful “Rings on Her Fingers” (1942), a romantic comedy with Henry Fonda and Gene Tierney.

Seemingly soured on Hollywood by his experience with “Laura” (1944), Mamoulian returned to Broadway, where he directed the hit musicals “Oklahoma!” (1943) and “Carousel” (1945). He made two more films, both for MGM: “Summer Holiday” (1948), and “Silk Stockings” (1957).

Mamoulian was fired from Fox on the sixth day of shooting “Cleopatra” (1963).

Mamoulian had never been very tolerant of creative interference, and the studios apparently had finally grown tired of battling with him. However, his contributions to the American cinema proved to be enduring.

In the late 1950s, Mamoulian retired. He participated in



արժանացել է աստղի: Թեպետ Ռուբեն Մամուլյանը ծնվել և ապրել է Հայաստանից հեռու, Նա հայրենիքի արժանի որդին էր: Երբ դեռ փոքր էր, տատիկը Նրան սովորեցրել է կարդալ ու գրել հայերեն: ԱՄՆ-ում գտնվելու ընթացքում Մամուլյանը աջակցել է իր հայրենակիցներին, հատկապես՝ հայ արվեստագետներին:

Երկար տարիներ Նա ապրել է Բևերլի Հիլզում՝ կնոջ Նկարչուհի Ազադիա Նյումանի հետ:

«Ինչու պետք է ամաչեմ, որ ես հայ եմ: Հայերը զարգացած մշակույթ ու արվեստ են ունեցել միջնադարից էլ առաջ: Մենք մշակույթ ունենք, երբ Ֆրանսիան, Անգլիան և Գերմանիան դեռ քաղաքակիրթ երկրներ չեն եղել: Իմ հայկական ծագումը ինձ համար ուժեղ հենարան եղավ: Հայերն ունեն այնպիսի Նշանակալի պատմություն, որ արվեստի տաղանդը Նրանց արյան մեջ է», - գրել է Նա:

the life of the Armenian diaspora in the USA, in 1971 visited Soviet Armenia. In 1964, he published the children's book “Abigayil”. On February 8, 1960, for his contribution to the motion picture industry, he received a star on the Hollywood Walk of Fame at 1709 Vine Street. Despite the fact that Ruben Mamoulian was born and lived far beyond Armenia, he was a worthy son of his homeland. As a child, his grandmother taught him to read and write in Armenian. During his stay in the US, Mamoulian supported his compatriots by promoting Armenian artists.

For many years he lived in Beverly Hills, with his wife, Azadia Newman, a portrait painter.

“Why should I be embarrassed that I am an Armenian? Armenians had a developed culture and art even before the Middle Ages. We had a culture long before France,

→ 1997 թ. ռեժիսորի ծննդյան 100–ամյակին, Հայաստանում թողարկվել է նամականիշ:

Մամուլյանը երազում էր նկարահանել կինոնկար, որի սցենարը կգրեր Վիլյամ Սարոյանը, իսկ երաժշտությունը՝ Արամ Խաչատրյանը, Շառլ Ազնավուրը կխաղար գլխավոր դերը, իսկ Սարոյիրոս Սարյանը կլիներ նկարիչը: 1983 թ. Ամերիկայի ռեժիսորների գիլդիան՝ կինոյի ասպարեզում մեծագույն ավանդի համար, Նորան շնորհել է բարձրագույն՝ Գրիֆիթի մրցանակը:

Նա մահացել է 1987 թ. դեկտեմբերի 4-ին Կալիֆոռնիայում:




1997 թ. Հայաստանում թողարկվել է նամականիշ՝ նվիրված ռեժիսորի ծննդյան 100–ամյակին:



England and Germany were civilized countries. My Armenian origin gave me strong support. Armenians have such a significant history that the talent of creativity lies in their blood," once he said.

Mamoulian dreamed of making a film with William S. Royan as a script writer and music by Aram Khachaturian; Charles Aznavour would play the main role, and Martiros Saryan would be the artist. In 1983, the Directors Guild of America awarded him the prestigious D. W. Griffith Award for Lifetime Achievement.

Mamoulian died in Los Angeles on December 4, 1987. In 1997, a postage stamp dedicated to the 100th anniversary of the director, was issued in Armenia.



ԱՐՄԵՆ ԶԻԳԱՐԽԱՆՅԱՆ

ARMEN DZHIGARKHANYAN



ЕСТВЕННЫЙ ФИЛЬМ


Э. КЕОСЯНА

БЕВСКИЙ

АНОВ



ПОСЛАЕТ



→ Նրան
դաստիարակել է
խորթ հայրը, որի
հետ տղան միշտ
ունեցել է ջերմ
հարաբերություններ:

Արմեն Զիգարխանյանը ծնվել է 1935 թ. հոկտեմբերի 3-ին Երևանում: Երբ Արմենը ընդամենը մեկ ամսական էր, Նրա հայրը՝ Բորիսը, հեռանում է ընտանիքից, և Արմենը հորն առաջին անգամ տեսնում է արդեն դեռահաս տարիքում: Նրան դաստիարակել է խորթ հայրը, որի հետ տղան միշտ ունեցել է ջերմ հարաբերություններ: Արմենը մեծացել է ռուսալեզու միջավայրում, սովորել է ռուսական դպրոցում: Մայրը՝ Ելենա Վասիլևնան, մոլի թատերասեր էր և բաց չէր թողնում ոչ մի դրամատիկական և օպերային ներկայացում:

Armen Dzhigarkhanyan was born in Yerevan, on October 3, 1935. His father Boris left family when Armen was only one month old and they first met in his teenagehood. Brought up by his stepfather he built warm and friendly relationships with him. Armen grew up in a Russian-speaking environment attending school with Russian inclination. His mother, Yelena Vasilevna, was an ardent theater lover who never missed any drama and opera performances.






Դպրոցական տարիներին Արմենը հրապուրվում է թատրոնով և կինոյով, իսկ դպրոցն ավարտելուց հետո ուղևորվում է Մոսկվա և փորձում ընդունվել Թատերարվեստի պետական ինստիտուտ, որը սակայն ձախողվում է: Վերադառնալով Երևան՝ 1953–54 թթ. Արմեն Ջիգարխանյանն աշխատանքի է ընդունվում Հայֆիլմ կինոընկերությունում՝ որպես օպերատորի օգնական:

1954 թ. ընդունվում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտ, անվանի ռեժիսոր Վարդան Աճեմյանի բաժին, որն այն ժամանակ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի ղեկավարն էր: Սակայն հավաքը բավականին մեծ է լինում, և Ջիգարխանյանը տեղափոխվում է Արմեն Գուլակյանի բաժին: Առաջին անգամ դերասանը բեմ է բարձրանում 1955 թ. հունվարին՝ Կ. Ս. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում Վ. Գուսևի «Իվան Ռիբակով» պիեսի հիման վրա բեմադրված Ներկայացման մեջ: Նա այնտեղ աշխատում է ավելի քան տասը տարի:

1967 թ. հայտնի ռուս ռեժիսոր Անատոլի Էֆրոսը դերասանին հրավիրում է Մոսկվայի Լենինյան կոմերիտ-փոխության անվան թատրոն, որտեղ նա խաղացել է գեներալ՝ «Բարբարոսը և հերետիկոսը» ներկայացման մեջ (ըստ՝ Ֆեոդոր Դոստոևսկու «Խաղացողը» պիեսի),

During the school years, Armen was fascinated by theater and cinema. After graduating from school Dzhigarkhanyan traveled to Moscow to pursue his career in cinematography and attempted entry exams, albeit unsuccessfully, at GITIS (the Russian Institute of Theatre Arts). Upon his return to Yerevan, he worked as a camera operator's assistant at the state-run Hayfilm Studio in 1953–1954.

In 1954, Dzhigarkhanyan was admitted to the Yerevan State Institute of Arts and Cinematography, in Vardan Achemian's class who then was the head of G. Sundukyan State Academic Theatre. The class turned out to be too big and Armen was ultimately transferred to Armen Gulakian's class. He graduated from the Institute in 1955. His first appearance on stage took place in 1955 at the Stanislavsky Russian Theater of Yerevan, performing in V. Gusev's play "Ivan Ribakov". He served for the same theater for over 10 years.



և էդուարդո դե Ֆիլիպոյի «Ֆիլումենա Մարտուրանո» պիեսում («Միլիոնատերերի քաղաքը» անվանումով) գլխավոր հերոսի դերը:

1969 թ. Զիգարխանյանն սկսում է խաղալ Անդրեյ Գոնչարովի ղեկավարած Մոսկվայի Վ. Մայակովսկու անվան թատրոնում, որի բեմում նա, մասնավորապես, խաղացել է Սթենլի Կովալսկու դերը Թենեսի Ուիլյամսի ««Ցանկություն» տրամվայ» և Մեծ Պա՝ «Կատուն շիկացած տանիքում», Սոկրատ՝ էդվարդ Ռաժինսկու «Չրոյցներ Սոկրատի հետ», զենեռալ Խյուդով՝ Միխայիլ Բուլգակովի «Վազբ» ներկայացումներում: 1996 թ. սեպտեմբերին Զիգարխանյանը հեռանում է Մայակովսկու անվան թատրոնից, սակայն շարունակում է ելույթներ ունենալ այլ թատրոնների բեմերում:


Կինոյում դերասանը իր նորամուտը նշել է 1960 թ. «Փլուզում» կինոնկարում Զակոբի դերակատարմամբ,

In 1967 invited by famous Russian director Anatoly Efros Dzhigarkhanyan moved to Moscow to make a career at the Lenkom Theatre, where he played General in the “A Barbarian and a Heretic”(based on Fyodor Dostoyevsky’s “The Gambler”) and the role of the protagonist in Eduardo de Philip’s “Filumena Marturano” (called “Town of Millionaires”). In 1969, he joined Moscow’s V. Mayakovsky Theatre directed by Andrey Goncharov. The roles included the characters in Tennessee Williams’ plays: Stanley Kowalski in “A Streetcar named Desire”, and Big Daddy in “Cat on a Hot Tin Roof”; the role of Socrates in “Conversations with Socrates” by Eduard Radzinsky; General Khludov’s role in V. Bulgakov’s play “Flight”. In 1996, Dzhigarkhanyan left the Theater continuing to perform on other theatrical stages.

Dzhigarkhanyan made his film debut in 1960 film “Landslide” as Hakob, but the real recognition came with the

խսկ հանրաճանաչություն Արմեն Զիգարխանյանին բերել է Նրա լավագույն դերակատարումներից՝ երիտասարդ գիտնական-ֆիզիկոս Արտյոմ Մանվելյանի դերը՝ Ֆրունզե Դովլատյանի «Բարև, ես եմ» կինոնկարում: Այս կինոնկարի ցուցադրումից որոշ ժամանակ անց հետևում են նոր հետաքրքիր առաջարկներ, որոնք ցուցադրում են Նրա դերասանական հնարավորությունների լայն շրջանակը, հոգեբանական հավաստիությունը և վերամարմնավորման վարպետությունը. դարբին Մուկուչ՝ «Եռանկյունի» (1967 թ.), Արտուզով՝ «Տրեստ օպերացիա» (1967 թ.), շտաբս կապիտան Օվեչկին՝ «Անորսալիների նոր արկածները» (1968 թ.), տստե Պռոշյան՝ «Չուլիսի վեցը» (1968 թ.) պատմական, Միխայիլ Ստիշնոյ՝ «Փոքրիկ կռուկ» (1968 թ.), Սերոբ՝ «Չարմանգուն հյուսիսից» (1975 թ.), Լևոն Պողոսյան՝ «Երբ գալիս է սեպտեմբերը» (1976 թ.), Իսայ՝ «Սգավոր ճյուղ» (1978 թ.), կինոնկարներում: Բացասական կերպարի դերակատարումներից առավել հիշարժան է «Սև կատու» ավազակախմբի սապատավոր պարագլուխ Կարպի դերակատարումը՝ «Չանդիպման վայրը փոխել չի կարելի» (1979 թ.) կինոնկարում:

Ընդհանուր առմամբ Զիգարխանյանը խաղացել է գրեթե երեք հարյուր դեր: Նա խաղացել է բազմաբովանդակ դերեր ռուսական և խորհրդային կինոյի լավագույն ռեժիսորների՝ տարբեր ժանրերի՝ կատակերգական, արկածային և երաժշտական ժապավեններում: 1991 թ. մինչև 1996 թ., որպես պրոֆեսոր, դերասանական վարպետության դասեր է դասավանդել



